

634.11

Ց-48

ԲՆ. ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՏՎԱՍՏԵԼ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԸ



ԳԻՆԸ 10 ԿՈՂ.

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 6 — 1927

19.961

30 JUL 2010

№ 16

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»

№ 16

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԴՄՔԵՐԸ

1. Աղեցույց տնտեսական աշխատանքի 50 Կ.
2. Ա. Շագունց — Մեր անկիճները (սպասված) 20 »
3. Լ. Փրուսկյան չեզ Գ. Մելիքյան — Ինչպե՞ս
ձևանալ յի գործարանում չուղ և շվեյց. 3 »
դանիսը պատրաստելը
4. Լ. Փրուսկյան Խոտարույները և նրանց
մշակութային յիզանակները (սպասվ.) 10 »
5. Խ. Ավգալբեգյան Հ. Խ Ս. Հ. Հոգային
Որենադիրքը, բացատրական հարց ու պա-
տասխաններով, մասն առաջին, աշխատավո-
րական հոդույթագործություն (սպասված) 40 »
6. Պ. Հեֆիմյան. — Թիֆլիսի մշակութային 10 »
7. Պ. Հեֆիմյան. — Շիրազի վերջը, նրա կերա-
կրիչն ու խնամքը 10 »
8. Խ. Սերիցյան. — Կաթնատնտեսության գործ-
նական ձևանարկ, մասն առաջին (64 նկ.) 1ա. 50 »
9. Լ. Մելիք-Շահնազարյան. — Ծխախոտի մշա-
կությունը 20 »
10. Ֆրիդլանդ. — Տասը պատգամ անասնապահին 20 »
- Խ. Սերիցյան. — Անասնապահ, թե՛ կոտոյ. կաթ-
նատնտեսություն 10 »
- Լ. Լաուրյան. — Բատրակ, կնքիր պայմա-
նադիր (չափածո) 5 »
- Մ. Թուսմանյան. — Շարքացանքը և նրա նշա-
նակությունը 15 »
- Խ. Տեր-Ներսիսյան. — Ինչպե՞ս մշակել խա-
ղողի այգիները (28 նկարով) 35 »
- Սերենսես դեպի գուղ. — Անդրկովկաս-

ԽԱ. ՏԵՐ-ՆԵՐՍԻՍՅԱՆ

634.11
S-48ԻՆԶՊԵՍ ՊԱՏՎԱՍՏԵԼ
ՊՅՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԸ1003
11123

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ

Յ Ե Ե Վ ա 6 — 1927



Գրառեպար 350ր.

Տիրաժ 3000

Պետհրատի 2-դ տպարան Յերեվանում — 915

ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԵՆ ՊԱՏՎԱՍՏՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԸ

Պատգատու ծառերի — խնձորենու, տանձենու, դեղձենու, կեռասի, դամբուլի շաա ու շաա փոփոխակներ (տեսակներ) կան, մեկը մյուսից լավ, մեկը մյուսից համով ու հոտով: Յեթե այդ լավ կամ, ինչպես ասում են՝ ազնիվ տեսակի ծառերի կորիզներ կամ սերմերը ցանենք, մենք նոր ծառեր կստանանք, բայց այդ սերմերից առաջ չեկամ նոր ծառերի պտուղներն այն հատկությունը, համն ու հոտը, տեսքն ու մեծությունը չեն ունենալ, ինչ վոր առաջ: Սերմից ստացված պատգատու ծառերի պտուղները մեծ մասամբ ավելի վատ փորակի կլինեն, և դա հազարավոր անգամ փորձված է:

Վորպեսզի կարողանանք ցանկացած փոփոխակի պտուղն ստանալ, դրա համար ամենալավ և փորձված միջոցը՝ պատվաստելն է (պատրիս անելը):

Պատվաստ անում են վայրի տունկերի վրա,

վորովհետև վայրի (հասարակ) տունները քիչ խնամք են պահանջում, նրանց արմատները լավ են զարգանում հողի մեջ, քիչ են հիվանդանում և չերկար դիմանում ու ապրում են: Իսկ նրանց վրա պատվաստած աղնիվ տեսակի պրտուղներն իրենց լավ հատկությունները չեն կորցնում և դեպի վատը չեն փոխվում, ինչպես սերմերից ստացվածները:

Պատվաստել կարելի չե պաղատու ցեղակից ծառերը, որինալի, աղնիվ տեսակի խնձորենուց կարելի չե պատվաստել վայրի (անտառի) խնձորենու վրա, տանձենուց — տանձենու վրա և այլն:

Դեղձենին, ծիրանին, նշենին ցեղակից են և կարելի չե դեղձը պատվաստել դեղձենու, նշենու և ծիրանի վրա: Կան շատ ծառեր, որինալի սեղենին, սերկեվին, վորոնց վրա կարելի չե տանձ պատվաստել:

Վայրի տուններ ունենալն ել հեշտ բան է: Դրա համար հարկավոր է անտառից աշնանը ժողովել հասած վայրի տանձ ու խնձոր, նրանց սերմերը հանել և նախորդ լավ մշակած վորեն հողակտորի վրա ցանել հենց աշնանից 3 սանտիմետր (մոտ 1 վերջոկ) խորության վրա: Գարնանն ալ սերմերը կծրեն և չեթե լավ հետեվենք, քաղհանենք ու պահպանենք, մինչև աշուն

կունենանք մոտ կես արշին մեծացած վայրի տուններ, վորոնց վրա ազատ կերպով կարելի չե պատվաստ անել:

Կարելի չե պատվաստ անել և մեծացած վայրի ծառերի վրա, բայց նրանց վրա արած պատվաստը շատ անգամ լավ չի կաշում, ծառը արմատից ցուլկներ է տալիս, նրանց տեղափոխել և մի ուրիշ տեղ տնկելը դժվար է լինում, դրա համար ել ջահիլ, մեկ-յերկու տարեկան վայրի տունկը շատ հարմար է պատվաստելու համար:

ԻՆՉ Ե ՊԱՏՎԱՍՏԸ

Պատվաստն այն է, չերը վորեն ծառի կամ տունկի վրա վորոշ ձևերով ամրացնում են մի ուրիշ ծառից վերցրած աչքը կամ տարեկան ճյուղի կտորը և ստիպում են, վոր աչք մասը կաշի ու աճի ալն ծառի կամ տունկի վրա, վորի վրա ամրացրել են: Այն տունկը կամ ծառը, վորի վրա պատվաստ են անում՝ կոչվում է պատվաստակալ, իսկ ալն ճյուղը կամ աչքը, վոր վերցնում ենք մեր ցանկացած ծառից և պատվաստում կոչվում է պատվաստացու: Թե պատվաստացուն և թե պատվաստակալը պետք

ե լինեն լավ զարգացած, ուժեղ և առողջ, հակառակ դեպքում՝ պատվաստը հաջող լինել չի կարող:

ՊԱՏՎԱՍՏԵԼՈՒ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ով ուզում է հաջող պատվաստ անել, պետք է անպայման ձեռք բերի պատվաստի դանակ, այգու դանակ, այգու մկրատ յեվ փոքրիկ սղոց:

Շատերը պատվաստելու համար գործ են ածում հասարակ դանակներ, փորոնք հարմար չեն այդ աշխատանքը կանոնավոր կատարելու համար և հենց այդ է պատճառը, փոր շատ անգամ արած պատվաստների մեծ մասը չի կաշոււմ: Պատվաստի դանակը ուղիղ բե-



Նկ. 1.

Պատվաստի դանակներ

րան և սուր ծայր ունի (տես Նկ. 1.) և ծառի կեղևը հեռ տալու համար շատ հարմար է: Այդ

դանակով. կարելի չէ հեշտությամբ և առանց մնասելու կտրել ճյուղը կամ աչքը, և բաց անել



Նկ. 2.

Այգու դանակ

պատվաստակալի կեղևը՝ առանց վերափորելու նրան: Ամենից լավերը համարվում են Կոչնդեյի դանակները, փոր կարելի չէ ձեռք բերել խոշոր այգեգործական ընկերութուններից կամ նրանց բաժանմունքներից: Այդ դանակները չիւրքեք չպետք է գործ ածել ուրիշ նպատակների համար, հակառակ դեպքում՝ նրանք կքոռանան և կանպետքանան պատվաստի համար: Պատվա-




Նկ. 3.

Այգու մկրատ

տացու ճյուղեր կտրելու համար գործ են ածում այգու դանակ կամ մկրատ: (Տես Նկ. 2 և 3):

Այս դորժիքները միշտ ել հարկավոր են գալիս այգեգործին ծառի շուքերը, ավելորդ ճյուղերը կտրելու, կամ ավելի հաստ ճուղերի կտրած



Նկ. 4.

Այգու սղոց

տեղերը հարթելու համար: Յեթե ուզում ենք պատվաստ անել ծառի հաստ ճյուղերի վրա, հարկավոր է լինում այդ ճյուղեր ուղիղ կտրել և դրա համար գործ են ածում հատուկ այգու սղոց: (Տես Նկ. 4):

Արած պատվաստը կապելու համար պետք է նախորոք հոգ տանել ռաֆֆիյա կամ թարմ ճյուղ ունենալու մասին, թե չե առանց կապելու թողած պատվաստը չի կպչի և կչորանա: Անձրեալին շրջաններում բացի կապելուց հարկավոր է լինում պատվաստի վրա նաև մածիկ (замазка) քսել: Դրա համար պետք է վերցնել հավասար չափով մեղրամոմ և կանիֆոլ^{*)}, հալել վորևե թիթեղե ամանում և պատվաստը վերջացնելուց ու կապելուց հետո յերեսից բարակ շերտով այդ խառնուրդից քսել:

*) Կանիֆոլ կարելի չէ ձեռք բերել դեղատոնից:

Այս բոլոր պատրաստությունները տեսնելուց հետո կարելի չէ պատվաստ անել:


ՊԱՏՎԱՍՏԻ ՁԵՎԵՐԸ

Պատվաստելու յերկու գլխավոր ձև կա՝ յատարակ պատվաստ, յերբ պատվաստելու համար մեկ տարեկան ճյուղը կամ շիվը են վերցնում և աչքնապատվաստ, յերբ վերցնում են տարեկան ճյուղից միայն աչքը կամ բողբոջը: Հասարակ կամ սովորական ձևի պատվաստ անում են գարնան սկզբներին, յերբ ծառերը դեռ չեն կանաչել և աչքերը դեռ չեն բացվել, իսկ աչքապատվաստ անում են ամրան վերջերին կամ աշնան սկզբին, աչքերի կամ բողբոջների կանաչ ժամանակ: Այս յերկու ձևի պատվաստի մասին մենք կխոսենք առանձին առանձին:

ՀԱՍԱՐԱԿ ԿԱՄ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՎԱՍՏ

Գարնան սովորական պատվաստի ձևերը շատ են, բայց մենք այստեղ կնկարագրենք դրանցից գլխավորները: Պատվաստացու շիվը կամ ճյուղը պետք է կտրել ցանկացած պտղատու ծա-

«ի տարեկան շիվերից, ջոկելով, իհարկե, նրան-
ցից ամենալավերը և առողջները: Պատվաստա-
ցու ճշուդն իր վրա պետք է ունենա մեկից-չե-
րեք աչք: (Տես նկ. 5)




Նկ. 5. Հասարակ պատվաստ
A a — պատվաստացու: Б. պատվաստակալ: В. պատ-
վաստակալի լիպատվաստացվի միացումը: С. պատ-
վաստի կապելը:

Յեթե պատվաստակալը (այն սուռնկը, վորի
վրա ուզում ենք պատվաստել) և պատվաստա-
ցու ճշուդը միևնույն հաստութիւնն ունեն, աչք
դեպքում անում են հասարակ, անգլիական պատ-
վաստ: Դրա համար թե պատվաստացուն և թե
պատվաստակալը պատվաստի դանակով թեք
կտրում են աջակես, վոր չերկուսի կտրվածքն ել
միատեսակ և միաչափ լինեն: Բացի այդ, կտր-
վածքը պետք է լինի շատ հարթ և ճշուդի հաս-
տութիւնից 4 անգամ չերկար:

Այդպես պատրաստած պատվաստացուն և
պատվաստակալը միմիանց հետ միացնում են
կտրվածքներով, կապում և ժածիկ քսում: Պատ-
վաստացվի վրա թողնում են չերկու կամ յերեք
աչք և վերևի աչքի կողմից այգու մկրատով թեք
կտրում, ինչպես ցույց է տված նկարի մեջ: Այս
ձևի պատվաստն ունի այն անհարմարութիւնը,
վոր ճշուդով կապելու ժամանանակ թեթե ան-
զգուշութիւնից կարող է շարժվել և լավ չկապել:

Ավելի տմուր է լինում, չեթե պատվաս-
տացվի և պատվաստակալի և կտրվածքի մեջ-
տեղից պատվաստի դանակով ճշուդերի յերկա-
րությամբ մի ժատաչափ ճեղքում և իրար մեջ
են հագցնում աջակես, ինչպես ցույց է տրված
նկար 6 ում: (Տես նկ. 6.):

Այս ձևով արած պատվաստան ամուր է լինում
և կապելը՝ ավելի դյուրին ու հեշտ:



Նկ. 6.


Անգլիական մեղով պատվաստ: A. a. պատվաստացու,
b. մեղը, c—պատվաստակալ, d—մեղը: B. cd—պատ-
վաստացվի յեվ պատվաստակալի միացման տեղը:

Նորից ենք կրկնում, վոր այս ձևի պատ-
վաստ կարելի չէ անել միայն այն դեպքում,

յերբ պատվաստացուն յեվ պատվաստակալը միև-
նույն հաստությունն ունեն:

Բայց շատ անգամ դժվար է լինում միև-
նույն հաստության պատվաստացու և պատվաս-
տակալ գտնելը: Մեր աչքին երևում հաճախ պա-
տահում է, վոր պատվաստակալն ավելի հաստ
է լինում, քան պատվաստացուն, վորովհետև
տունը կամ ծառը 2—3 տարեկան է լինում:
Այս դեպքում պատվաստացուն նորից թեք և
հարթ կտրելով՝ ամրացնում են նույն թեքու-
թյամբ և նույն չափի գորված պատվաստակալի
կողքից անպես, ինչպես ցույց է տրված նկար
7-ում: (Տես նկ. 7):

Այս դեպքում ել հնարավոր է պատվաս-
տացվի և պատվաստակալի կտրվածքի միջից
ձեղքել և իրար մեջ հազցնել՝ ամուր կաշելու
համար: Այս ձևի պատվաստի պակասութունն
այն է, վոր դժվար է լինում պատվաստակալի
կտրվածքը պատրաստել պատվաստացվի կտր-
վածքի չափով և ամրացնել այնպես, վոր բաց-
վածքներ չմնան: Այս պահառը վերացնել կարե-
լի չէ, յեթե նույն ձևը քիչ փոփոխենք և պատ-
վաստացվի կտրվածքը քիչ խորացնենք այնպես,
վոր պատվաստացուն նստի պատվաստակալի



Նկ. 7.

Պատվաստելը կողքից. a — պատվաստացու,
b — պատվաստակալ, m, m' — ճեղերը:

վրա, ինչպես ցույց է տրված նկար 8 ում:
(Տես նկար 8):

Այս ձևով արած պատվաստն ավելի ամուր
և հաջող է կապում:

Վեր թված բոլոր ձևերի պատվաստները


կարելի չէ անել վաղ դարձանը, քանի դեռ չեն
բացվել ծառերի և տունկերի
աչքերը:



Նկ. 8.

Նստած պատվաստը. Պատվաստատափայլի կեղևը
A — պատվաստացու, կարելի է և հետ տալը հեշտ է
ab — կտրվածքը: Ինչու, վորովհետև տունկի
B — պատվաստակալ, հյութերն արդեն շարժուն
cd — կտրվածքը: զրության մեջ են: Կեղևը
փայտամասից բաժանելն ու հետ տալը նորից

պետք ե կատարել պատվաստի դանակով և զգուշութամբ, վորպեսզի կեղեր չփշանա:




Նկ. 9

- Գեղերի տակ պատվաստելը: A և B — պատվաստացուն կողքից և դիմացից: C — պատվաստակալը կեղեր բացած: D — պատրաստի պատվաստ:

Մ'ը այգետերերը շատ անգամ ստիպված են լինում պատվաստել արդեն բավականին հաստատ-

ցած՝ 5 — 6 տարեկան տունկեր, կամ 10 — 15 տարեկան ծառերի ճյուղեր: Այդպես հաստացած պատվաստակալի վրա դժվար ե պատվաստել կեղերի տակ, կամ մեր պատժած մշուս ձևերով: Այս դեպքում պատվաստ անում են այսպես



Նկ. 10

BBC — պատվաստակալի ճեղքերը: D — պատվաստացուն հագցրած պես, վոր վերջնիս պատվաստակալի ճեղքի մեջ: կեղեր կաշի պատվաստակալի կեղերին: (Տես նկար 10):

Պատվաստելուց հետո նորից կապում են և մածիկ քսում սովորական ձևով:

ԱՂԲԱՊԱՏՎԱՍՏ

Ինչպես սկզբում ել ասացինք, պատվաստը միայն գարնանը չեն անում: Ամառն ու աշնան սկզբներին ել կարելի չե պատվաստ անել և ավելի հեշտ ու հաջող, քան գարնանը: Ամառվա պատվաստը կոչվում է աչքապատվաստ, վորովհետև ծառի ճյուղից միայն մի աչք են կտրում: ու պատվաստում, և վոչ թե գարնան նման ամբողջ ճյուղը:

Մեծ տնկարաններում, ուր հապարավոր 1—2 տարեկան վաղի տունկեր են պատվաստում, միշտ աչքապատվաստ են անում՝ ամառվա վերջերից սկսած մինչև աշուն, վորովհետև աչքապատվաստ անելը հեշտ է, շատ արագ է կտրարվում, և յեթե գարնան սովորական պատվաստը մի մարդը որական 80—100-ն է անում, աչքապատվաստ կանի 200, իսկ յեթե լավ վարժվի՝ 300—350: Բացի այդ, աչքապատվաստն ունի այն առավելությունը, վոր շատ հաջող է հեշտ է կաշում, և յեթե գարնան արած պատվաստի 100 ից 30—35 ն է կաշում, աչքապատվաստինը կաշում է 100—90 ը: Ահա թե ինչու աչքապատվաստն ավելի ձեռնասու է յե:

ՅԵՐԲ ՊԵՏԲ Ե ԱՆԵԼ ԱՂԲԱՊԱՏՎԱՍՏԸ

Աչքապատվաստ կարելի չե անել ջահիլ՝ 1 3 տարեկան տունկերի վրա ամբան վերջերից սկսած, յերբ այդ տունկերի կեղևը, ինչպես ասում են, հյութալի չե դառել, այսինքն՝ փափկացել և հեշտությամբ է բաժանվում տունկի փայտամասից: Այդ իմանալու համար պետք է տունկի կեղևը պատվաստի դանակով, վործի համար, կտրել բնի յերկարությամբ և նույն դանակով քիչ հետ տալ: Յեթե կեղևը հեշտությամբ բաժանվում է փայտամասից, կնշանակի ազատ կերպով կարելի չե պատվաստել:

Պատվաստացու աչքերը պետք է վերցնել այն պողատու ծառից, վորից ցանկանում ենք պատվաստել: Իրա համար պետք է ջոկել ծառի նույն տարվա շիվերից ախպիսիններ, վորոնց վրայի աչքերը արդեն լավ հասունացել են: Իսկ հասունացած աչքերը հեշտ է ճահաչել: Նրանք պետք է բավականաչափ մեծացած և ամուր լինեն: Մեր դաշտավայրի տաք շրջաններում (Յերևան, Եջմիածին, Ղաժարու և այլն) պողատու ծառերի աչքերը լավ հասունանում են ոգոստոսի սկզբներից սկսած, այդ պատճառով ել ոգոստոսից սկսած այդ շրջաններում կարելի չե

աչքապատվաստ անել: Սեր լեռնային շրջաններում (Դիլիջան, Ղարաբաղի սա, Լենին կան և այլն) աչքերը ավելի ուշ են հասունանում, ուստի այդ շրջաններում աչքապատվաստը հաջող կպչելու համար պիտի պատվաստել մի քիչ ավելի ուշ, ոգոստոսի լերկորդ կեսին: Յեթն չհասունացած աչքեր պատվաստենք, կարող են չկպչել ու չորանալ:


ԻՆՉՊԵՍ ԱՆԵԼ ԱՇԽԱՏՎԱՍՏԸ

Աչքապատվաստի համար պատվաստացու ճյուղը պետք է վերցնել վրեժե լավ պտղատու և լավ փոփոխակի ծառից, ընտրելով նույն տարվա լավ զարգացած և առողջ ճյուղը: Զոկած ճյուղը այդու դանակով կամ մկրատով կտրելուց հետո, ճյուղի ծայրի 5 - 8 աչքը, պետք է կտրել և դեն ձգել, վորովհետև նրանք հասունացած չեն լինում և պատվաստի համար անպետք են: (Տես նկ. 11):

Այնուհետև ճյուղի վրայի տերևները պատվաստի դանակով պետք է կտրել ափսոս, վոր տերևների կոթերը 1—2 մատ յերկարությամբ մնան ճյուղի վրա: (Տես նկ. 11):

Ճյուղը այդ ձևով տերևներից մաքրելուց հետո, պետք է վերցնել լավ սրած պատվաստի

դանակը և աչքից մեկ մատաչավ վերևից ու ներքևից նշան անելուց հետո, ճյուղի կեղևի




Նկ. 11.

Աչքապատվաստի համար վերցրած ճյուղը տերեւներով յեւ տերեւները կտրած

այդ մասը աչքի հետ միասին նույն դանակով վերեւից ներքեւ կտրել ափսոս, վոր կեղևի հետ

կարելի նաև մի քիչ ճյուղի փայտածախից (Տես նկ. 12):



Նկ. 12

Պատվաստացու աչքի կլոր-
րելը: Կտրած աչքը առջևից
յեվ կտրված տեղից:

սանտիմետր ($1-1\frac{1}{2}$ վերջոկ) բարձրության
վրա: Ավելի բարձրից արած պատվաստան ան-
հարմար է, վորովհետև պատվաստած տեղից
ցած պատվաստակալը կսկսի շիվեր տալ, վոր
ամենևին ցանկալի չէ: Իսկ քան տունկի բողա-
ղին մոտ կատարվի աչքապատվաստը, այն-
քան ավելի լավ: Նախ քան պատվաստելը,
պետք է տունկի չորս կողմի հողը լավ մաքրել

Պատվաստացու
աչքն այս ձևով
պատրաստելուց
հետո, պետք է
պատրաստել
պատվաստակալը,
այսինքն՝ 1—2
տարեկան վայրի
տունկը, վորի վրա
ցանկանում ենք
աչքապատվաստ
անել:


Տունկը պետք է
պատվաստել բո-
ղաղից կամ հողի
յերեսից 3—5

և նոր միայն անցնել պատվաստելու աշխատան-
քին: Մաքրելուց հետո պատվաստի դանակով
մոտ 5 սանտիմետր ($1\frac{1}{2}$ վերջոկ) բարձրության
վրա բնի լանությամբ պետք է կեղևը կտրել,
ապա ալյուղից բնի յերկարությամբ վերևից
ներքև կտրել դանակի սուր ծայրով մի քիչ ա-
վելի յերկաշ, քան մեր պատրաստած պատվաս-
տացու աչքի յերկարութունն է, և զգուշու-
թյամբ հետ տալ (բացել) կեղևը նույն դանա-
կով այնպես, վոր կեղևը չջարդվի և չփշանա:
Այնուհետև բուծ և ցուցամատերով բռնելով
կտրած աչքի վրայի տերևի կոթից, աչքը պետք
է մտցնել բացված կեղևի տակ և ռաֆիայով կամ
թարմ ճրուպով կապել սովորական պատվաստի
նման: (Տես նկար 13):

Այսպիսով աչքապատվաստը պետք է վերջա-
ցած համարել, և ալգու մկրատով մաքրելով տուն-
կի վրայի ավելորդ ներքևի ճյուղերը, պետք է
պատվաստած տունկը թողնել հանգիստ: Հաջող
արած աչքապատվաստը 2—3 շաբաթ անց ար-
դեն կպած է լինում: Յեթե տունկի վրա 2—3
շաբթից հետո պատվաստած աչքը կանաչ է մը-
նացել (չի չորացել), իսկ վրայի տերևի կոթը
թեթև դիպչելուց ընկնում է, կնշանակի աչքն
պատվաստն արդեն կպել է:

Պատվաստելուց մեկ ամիս հետո, պետք է

պատվաստի կապը թուլացնել, վորպեսզի կպած աչքը չխեղդվի. կպած աչքապատվաստը չի




Նկ. 13

Աչքը կեղեվի տակ հագցրած լինել կապած:

բացվում և չի զարգանում, այլ մնում է այդպես մինչև դարուն և միայն դարնանն աչքից նոր չիվ է տալիս: Վորպեսզի զարնանր

բացված աչքապատվաստի չիվն ուժեղ զարգանա, անհրաժեշտ է պատվաստած մասից վերև և ներքև առաջացող բոլոր նոր չիվերը կտրտել:



Նկ. 14

Պատվաստած աչքից առաջ լեկած մեկ տարեկան չիվը:

հակառակ դեպքում՝ պատվաստը կարող նվազ մնալ, թուլանալ և մինչև իսկ չորանալ:

Յերբ աչքապատվաստից առաջացած չիվը բավականաչափ մեծացավ, պետք է նրան կապել տունկի ավելորդ չիվերից մաքրած ցողուն:


նից, վորպեսզի բաժինները չջարդեն դեռ մաս-
դաշ պատվաստը: Յերկրորդ տարին, պետք է
պատվաստից քիչ վերև տունկի ցողունը կտրել,
իսկ պատվաստի կողքից $1\frac{1}{2}$ —2 արշինանոց ա-
մուր ձող հողի մեջ ցցել և այդ ձողից կապել
պատվաստն այնպես, ինչպես ցույց է տրված
նկար 14-ում:

ՊԱՏՎԱՍՏԸ ՊԵՏԲ Ե ՓՈՐՁԱԼՆ ԶԵՌԲՈՎ ԱՆԵԼ

Յեթե պատվաստել ցանկացողը դեռ անփորձ է
և նոր է սկսում պատվաստ անել, պետք է նախո-
րօք վարժվի: Պատվաստացուն կամ պատվաստա-
կալը հաջող կտրելու համար, պետք է սովորել
պատվաստի դանակով թեք կտրելու կամ կեղևը
կտրելու և բանալու ձևերը:

Դրա համար պետք է մի առ ժամանակ
փորձեր անել անպետք ճյուղերի վրա: Պատվաս-
տի դանակը պետք է անպայման լավ սրված
լինի: Դանակով կտրելու ամեն մի աշխատանք
պետք է կատարվի միանգամից, առանց տաշ-
տաշելու կամ քերելու: Ամեն մի անհարթ կտրը-
վածք աչքի կամ պատվաստացվի վրա կարող է
պատճառ լինել պատվաստի անհաջողության:

Այլ պատճառով դեռ չվարժված՝ յերբեք չպետք
է պատվ ստի աշխատանքներ սկսել պիտանի
տունկերի վրա, հակառակ դեպքում՝ զուր տե-
ղը կարող են տունկեր փչանալ: Միմիայն շատ
թեք քիչ յերկար փորձառութուն ձեռք բերե-
լուց և լավ վարժվելուց հետո կարելի է անց-
նել պատվաստելու իսկական աշխատանքնե-
րին:




ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԿԿ (Բ) ԿԿ-Ի ԱԳԻՏՊՐՈՊ
 ԲԱԺՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻ ՀԵՏՎՅԱԼ
 ԳՐՔԵՐԸ

1. Ն. Պոպով. — Վոչխարի քյափանակ հիվան-
 դությունը 10 կ.
2. Կ. Մելիք-Շահնագարյան, — Դաշտային մկեն-
 ըը և նրանց դեմ կովելու
 միջոցները 15 »
3. Խ. Տեր-Ավագյան. — Մեղվի փտախտ հի-
 վանդությունը և նրա դեմ
 կովելու միջոցները 20 »
4. Ա. Ֆուրմալիաս. — Կաթնատու կովերի կե-
 րակրելն ու խնամքը 20 »
5. Գլուխով. — Ի՞նչ է կանաչ պարարտացուծը
 և ի՞նչ ոգուտ և տալիս նա 25 »
9. Ն. Ռիժով. — Արմատապուղների մշակու-
 թյունն անասուն. համար . 15 »
7. Մ. Թումանյան. — Բամբակի մշակութունը . 35 »
8. Ս. Ֆուրմալիաս. — Հորթերի խնամքն ու
 կերակրելը 15 »
9. Պրոֆ. Գուրիև — Ծանրած կովի խնամքը . 20 »
- 10 Ե՞նչու պե՞տ է ցելը վաղ աճել 10 »

«ՄԱՃԿԱԼ» Ի ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
 ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

1. Խ. Ֆերիցյան. — Ի՞նչպիսի սերմացու պիտի
 ցանկի (սողառ.) 10 կ.
2. Բամբակի լեվ կաղամբի վնասատուները . . 12 »
3. Ն. Ն. Բոգդանով. — Ընտանի կենդանիների
 քոսը 12 »
4. Գ. Գրանլյան — Բամբակի չոռ հիվանդու-
 թյունը 12 »
5. Պ. Ն. Սակովցիև — Ինչպես պետք է կովել
 չորության դեմ անջրդի հո-
 դերում 12 »
6. Պրոֆ. Պ. Կոսիկով. — Ի՞նչ կա հոդի մեջ և
 ի՞նչպիսի հոդեր են լինում 10 »
7. Խ. Տեր-Ներսիսյան. — Խնձուրենու փաստու-
 ները և նրանց դեմ կովե-
 լու միջոցները 12 »



- չան Յերկրային Կոմիտեի բանաձևը գյու-
 ղացիական հարցի մասին, Ս Շագունցի
 նախաբանով (սպառված) 14 »
16. Հայաստանի Կոմիտեի սահմանափակ կուսակցու-
 րյան Կենտրոնական Կոմիտեի Չորրորդ
 Պլենումի Բանաձեւերը (սպառված) 15 »
17. Ռ. Ստեփանյան. — Սոցիալ յեղյութաբար անա-
 տունների ժանտախտը 15 »
18. Հ. Ազատյան. — Գյուղատնտեսական բանվոր-
 րությունը և միջազգային կոմունիստական
 շարժումը 40 »
19. Ն. Խան-Աղյան. — Ուղեցույց արդյունավետ
 խոգարութեան խան 15 »
20. Յերգինանցով. Հավարութ. և նրա ոգուտն 20 »
21. Ա. Դանելյան. — Կով և ուշ, քան յերբեք
 (ազրո-սիլես) 20 »
22. Կ. Ե. Սելիֆ-Շահնազարյան. Կտախտը և
 կանեփը 20 »
23. Ս. Կարապետ. — Անդրկովկասի տնտեսական
 զրությունը 15 »
24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետու-
 րյան անհատների փայտեղեն բաց բող-
 նելու համար (սլաշտնական)
25. Պրոֆ. Ա. Բալանթար. — Կաթնատու կովի
 կերակրումը 30 »
26. Ա. Ս. Տրիֆոնով. — Ինչու պետք և ցելը
 շուտ անել 15 »
27. Ա. Բակունց. — Գալուստի վիկը (ազրո-սլաու-
 մվածք) 15 »
28. Ա. Բակունց. — Կարտոֆիլի մշակութունը 20 »
29. Լ. Սուբբոսին. — Կովի դատը (ս)
30. Կ. Ե. Սելիֆ-Շահնազարյան. —
31. Խ. Սե. Ներսիսյան. — Պողատու
 զատատուներն ու հիվանդութ.

« Ազգային գրադարան



NL0301017

32. Խ. Ավգալբեզյան. — Գյուղի հողաշինարարու-
թյունը 20 »
33. Արագի. — Տրակտորը (ազրո-պատմվածք) 15 »
34. Շալսացի. — Խորհրդավոր տրտունջներ (ազ-
րո-զրույց) 15 »
35. Խճկո-Ապեր. — Գյուղատնտես-անասնարույժը
և իր ազրո-զրույցը 20 »
36. Ս. Ֆրիդլիհ. — Տասը պատգամ անասնապա-
հին (ը տպագր) 20 »
37. Մ. Խանգազյան. — Մեղվարուծության գործ-
նական ձեռնարկ 60 »
38. Արամայիս Յերզնկյան. — Մեր գյուղատնտես-
սության հերթական խնդիրներից 40 »
39. Ա. Արամասյան. — Գութան, թե՛ արօր 10 »
40. Վ. Բոյկով. — Այժն աղքատի կոյնը և 20 »
41. Իս. Յեր-Ներսիսյան. — Գումաղբը 20 »
42. Ի. Կուզնեցով. — Լենինը և գյուղացիութ 30 »
43. Մ. Մուսեղյան. — Անտառը պետք և հաշվով-
կտրել 5 »
44. Իս. Յեր-Ներսիսյան. — Ինչպես պատվաստել
պտղատու ծառերը 10 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՄՆԵՆ

1. Շ. Ազատյան. — Յեռազաշտից զեպի սոցիալիզմ
կոոպերացիայի վրայով
2. Մ. Բակունց. — Խոտորջուրի կոմունան
- ԴԻՄԵԼ՝ ՅԵՐԵՎԱՆ, Հողժողկոմատ՝ Հրատարակչության:
Պետերատի կենտրոնական լիով գա-
վառական գրախանութներին,
Գաղնոդրածիններին: